



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Հումուսը կայուն օրգանական նյութ է: Բույսերը հողում առկա հանքային նյութերը կլանելով իրենց ներսում ստեղծում են օրգանական միացություններ: Այս միացությունների ընթացքը այնուհետև շարունակում է կենդանական աշխարհը: Բույսերի ու կենդանիների մահից հետո դրանց մնացորդները ժամանակի ընթացքում քայքայվելով վերածվում են կենսատու հումուսի: Տեղի է ունենում քիմիական տարրերի յուրօրինակ շրջապտույտ՝ «հող-բույս-կենդանի-մանրէ-հող» համակարգով: Այս շրջապտույտը կոչվում է «կենսաբանական»:

Մթնոլորտային տեղումների միջոցով հողը ստանում է (կլանում է) ջուր, որը բույսերի կողմից գոլորշացման միջոցով կրկին վերադառնում է մթնոլորտ: Այսպիսով, հողը նույնպես մասնակցում է Երկրի վրա ջրի շրջապտույտին: Երկրի մթնոլորտը, ջրոլորտը, պինդ շերտը և հողային ծածկոցը փոխադարձ սերտ կապի մեջ են:

Հողային ծածկոցը բազմակի օգտագործման բնական ռեսուրսի մի յուրահատուկ ձև է, որը բուսականության հետ մեկտեղ հսկայական դերակատարում ունի Երկրի կենսոլորտի բնականոն ընթացքի ապահովման գործում: Հողն ունի բնական բերրիություն և բերքի ձևով մարդու համար անհրաժեշտ սնունդ, հումք, կենդանիների համար կեր ստեղծելու ունակություն: Հողը մարդու համար ստեղծում է կենսաբանական արտադրանք, հողում առկա քիմիական տարրերի և միացությունների առկայությունը կամ բացակայությունը ազդում է կենդանիների, բույսերի որակական հատկանիշների վրա, որոնք այնուհետև, սննդամթերքի ձևով, անցնում են մարդու օրգանիզմ: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ մարդու առողջության պահպանման գործում հողը նույնպես անփոխարինելի միջոց է: Առանձնակի կարևորություն ունի հողի սանիտարապաշտպանիչ հատկությունը: Այն հզոր ֆիլտր է և ընդունակ է մաքրելու տարաբնույթ ջրային լուծույթները, իրար կապելու քիմիական միացությունները (Հիշենք խմելու և ոռոգման նպատակներով գրունտային ջրերի, ջրհորների օգտագործումը):